

## ԵՆՁԱԿԱ-ՍՏՈՐՈԳՅԱԼ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՄԻՋԱՐԿՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՐՓԻՆԵ ԲԱԲՈՅԱՆ

Ընդմիջարկումը երևույթ է, իրողություն, որ նշանակում է «ընդմիջարկելը» կամ «ընդմիջարկվելը»<sup>1</sup>: Ընդմիջարկվող քերականական կապակցություններից են ենթակա-ստորոգյալ, որոշիչ-որոշյալ, կապ-կապի խնդիր և այլն: Ընդմիջարկումը կատարվում է ընդմիջարկություններով, որոնք կառուցվածքային տարատեսակ միավորներ են՝ բառ, բառակապակցություն, նախադասություն: Նրանք կարող են գործածվել թե՛ անկախ և թե՛ փոխկապակցված ձևով, կարող են հաջորդել միմյանց լինելով անկապ կամ կապակցված հարաբերություններով: Որքան կայուն են քերականական կապակցությունները, նույնքան փոփոխական են ընդմիջարկությունները: Օրինակ՝ ենթական և ստորոգյալը կայուն են իրենց դերով, քերականական ըմբռնունով, կարող են փոխվել շարադասությամբ, համաձայնությամբ և արտահայտությամբ, բայց ենթական մնում է ենթակա, ստորոգյալը՝ ստորոգյալ:

Ընդմիջարկությունների ուսումնասիրությունը նոր է սկսվում, առաջին անդրադարձը կատարել է Է. Ս. Մկրտչյանը<sup>2</sup>: «Ընդմիջարկությունները ժամանակակից հայերենում» թեմայի ուսումնասիրության առաջին փորձը մեզ է վիճակված, որը սկսվում է ենթակա-ստորոգյալ կապակցության քննությամբ:

Ենթակա-ստորոգյալ կապակցությանն առնչվող ընդմիջարկությունների բնութագրությամբ նպատակ ենք հետապնդում խոսքի մեջ ճիշտ որոշել ենթական ու ստորոգյալը, որոնց միջոցով էլ արտահայտված է միտքը, որոնք ունեն իրենց խմբերը, և դրանցով սահմանազատվում են քերականական կապակցություններն ու ընդմիջարկությունները:

Ընդմիջարկումը ընդհանրական երևույթ է և հատուկ է քերականական կապակցություններին: Ընդմիջարկությունները բազմազան են ու բազմատեսակ, կարող են լինել ճոխ, ծավալուն կամ համառոտ ու հակիրճ, օրինակ, ենթական և ստորոգյալը, որ ունեն իրենց խմբերը, ընդմիջարկումներով կտարբերվեն որոշիչ-որոշյալի կամ հենց բաղադրյալ ստորոգյալի մասերի ընդմիջարկություններից:

Այս դեպքում ուսումնասիրում ենք ենթակա-ստորոգյալ կապակցության ընդմիջարկումը:

Ենթակայի և ստորոգյալի ընդմիջարկումը կատարվում է բառով կամ բառերով, անկապ կամ կապակցված կառույցներով, բառակապակցություն(ներ)ով,

<sup>1</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-2, Եր., 1976, էջ 402:

<sup>2</sup> Տե՛ս Էդուարդ Մկրտչյան, Ընդմիջարկությունները որպես քերականական կապակցություններ տրոհող կառույցներ գրաբարում (Պատմա-բանասիրական հանդես (ՀՀ ԳԱԱ), Եր., 2007, 3(176), էջ 143-154):

նախադասություն(ներ)ով. փաստորեն շարահյուսական կապակցության բաղադրիչները միմյանցից հեռանում են տարածական հարաբերությամբ՝ առանց խաթարելու ներքին կապն ու փոխադարձ պայմանավորումը: Սակայն չպետք է կարծել, թե ենթակայի և ստորոգյալի ամեն մի հեռացում-անջատում ընդմիջարկում է համարվում, թեև ձևականորեն նրանց հաջորդական գործածությունը, այնուամենայնիվ, խախտվում է, և իրարից հեռանում-անջատվում են: Հարց է ծագում. *ինչպե՞ս է դրսևորվում ընդմիջարկումը:*

Դրա համար անհրաժեշտ է քերականական, արտասանական ինչ-որ իրողության գործադրում. այս դեպքում հարմար են *ինչերանգը* և *դադարը*:

- Օրինակ՝
1. Թագուհին հառաչում էր:
  2. Թագուհին տխուր հառաչում էր:
  3. Թագուհին, տեսա, հառաչում էր:
  4. Թագուհին, տեսա, տխուր հառաչում էր:
  5. Թագուհին՝ տխուր և տրտում, տեսա, թախծորեն հառաչում էր:

Ենթական և ստորոգյալը բոլոր օրինակներում իրենց արտահայտությամբ և ներքին կապով անփոփոխ են և միայն 1-ին օրինակում են հաջորդում իրար, մյուս տեղերում հեռացել են իրարից, այսինքն՝ *ընդմիջարկվել են*, սակայն տարբեր են նրանց ընդմիջարկությունները: Այսպես՝ 2-րդ օրինակում, մեր կարծիքով, բուն ընդմիջարկում չկա, որովհետև ստորոգյալի խմբի *տխուր* լրացումը սերտ կապի մեջ է իր լրացյալի՝ ստորոգյալի հետ, և մյուս կողմից՝ ենթակայի ու ստորոգյալի միջև հնչերանգի խախտում և դադար տեղի չեն ունենում: 3-րդում ընդմիջարկված են *տեսա* միջանկյալ նախադասությամբ, 4-րդում իրադրությունն այլ է. ընդմիջարկություն են *տեսա* բառ-նախադասությունը և *տխուր* լրացումը, որը այս դեպքում հնչերանգով և դադարով անջատվում է ենթակայից: Իսկ 5-րդի ընդմիջարկությունը ճոխ է, քանի որ նրանում ներառվում են՝ ա) ենթակայի խմբի *տխուր ու տրտում* հետադաս որոշիչ կառույցը, բ) *տեսա* միջանկյալ նախադասությունը և գ) ստորոգյալի խմբի *թախծորեն* պարագան:

Այսպիսով՝ ընդմիջարկությունների ցուցադրումով և բնութագրումներով անդրադառնում ենք նախադասության կառուցվածքի որոշ առանձնահատկություններին, իսկ ամենից առաջնային և կարևոր խնդիրը շարահյուսական կապակցությունների ճիշտ որոշման և նախադասություններում արտահայտված մտքերը ճշմարիտ կռահելու, հասկանալու իրողությունն է:

Ընդմիջարկությունները բնութագրելու համար փաստերն ընտրել ենք գեղարվեստական գրականությունից, գիտական շարադրանքներից և մանուլից, որից պարզվում է, որ ունենալով կառուցվածքային ընդհանրություններ, դրանք ունեն նաև մասնակի տարբերություններ:

Նշվեց, որ ընդմիջարկությունները կառուցվածքով բազմազան են, որոնք կարելի է խմբավորել՝ նկատի ունենալով նրանց կազմն ու կառուցվածքը. լինում են

1) բառական, այսինքն՝ մեկ բառով արտահայտված և 2) բաղադրյալ կամ բաղադրավոր, որն իր մեջ կարող է ներառել բառ կամ բառեր, կապակցություններ, նախադասություններ, կապակցված կամ չկապակցված կառույցներ, այսինքն՝ կարող են լինել բազմաբղետ կազմություններ:

Օրինակ՝ 1. Եստեղ մեզ մոտիկ թավաղներ ունենք.

*Ամենքս*, իմացիր, տասը տեր *ուներնք* (ՅԹ, 162):

Այստեղ ընդմիջարկությունը բաղադրյալ է, կազմված է *իմացիր* բայաձևով և *տասը տեր* կապակցությամբ, որը ստորոգյալի խմբի որոշիչ ունեցող ուղիղ խնդիրն է, իսկ բաղադրիչների միջև որևէ կապ չկա:

2. Մեր *տանուտերն* էլ, աստված է օրհնել,

Եսպես մի բան էր պակաս նրան էլ.

Մեկի պոչը միշտ մեկելի տակին,

*Եկավ* տաքացած, ճիպոտը ձեռքին (ՅԹ, 163):

Ենթական և ստորոգյալը շատ են հեռացել իրարից, ունեն բազմաբաղադրիչ ընդմիջարկություն՝ վերաբերկան բառ (էլ), երկու համագոր նախադասություններ և մի դարձվածային բառակապակցություն: Ստորոգյալի խումբը ընդմիջարկության մեջ չէ, իսկ եթե բանաստեղծը գրեր «Տաքացած *եկավ* ճիպոտը ձեռքին», այդ դեպքում *տաքացած* պարագան ևս կվերցնեինք ընդմիջարկության մեջ:

Բերված երկու օրինակներից երևում է, որ ընդմիջարկություններն առաձգական են. կարող են լինել և՛ համառոտ, և՛ ծավալուն, ներքին հարաբերություններով՝ յուրահատուկ: Նշված ընդմիջարկությունների բաղադրիչների միջև կապ չկա, դրանք ուղղակի ասած, անկապ կառույցներ, բաղադրիչներ են: Սակայն լինում են նաև կապակցված բաղադրիչներ:

Օրինակ՝ *Երեք թագավոր*, ասում են, իբրև,

Խելքս չի կտրում, որ էսպես լինի,

*Խորհուրդ են արել*, որ այսուհետև

Իր թախտից գրկվի, ով կռիվ անի (160):

Աստեղ ընդմիջարկությունը չորս բաղադրիչ ունի՝ երեք նախադասություն, որոնցից առաջինը և երկրորդը համադաս են [*ասում են*, (*բայց*) *խելքս չի կտրում*], երրորդը ստորադաս է երկրորդին, այսինքն նախադասությունների միջև քերականական կապ կա, չորրորդ բաղադրիչը միջանկյալ բառ է՝ *իբրև*, որ կապ չունի ոչ մի բաղադրիչի հետ: Ուրեմն՝ ընդմիջարկությունը ներառում է *կապակցված և անկապ բաղադրիչներ*:

Ահա թե ընդմիջարկությունների ինչպիսի բաղադրիչներ, կազմություններ ու կառույցներ և բաղադրիչների միջև եղած փոխհարաբերություններ կարելի է պատկերացնել և մյուս կողմից էլ գաղափար կազմել քերականական կապակցությունների բաղադրիչների անջատման-հեռացման հնարավորությունների ու ծա-

վալների մասին, որոնք երբեմն առաջ են բերում մտքերի ընկալման դժվարություններ և համանման սովորական կառույցները տարբերակել, զնահատել նրանց գործածության առանձնահատկությունները խոսքի մեջ և նախադասության կառուցվածքում: Միայն այս եղանակով կարող է կարևորվել ու արժևորվել ընդմիջարկությունների ուսումնասիրության հարցը:

Չարենցից օրինակ՝

Ո՞վ *դու*, որ պետ ես կարգել ինձ տարերքին անդեմ,

Կույր տարերքի ու նյութի տենդը կաշկանդող,-

*Տուր* զգրություն լինելու (ԵԶ, 385):

Բանաստեղծական խոսքում նախադասության անդամների, լրացումների շարադասական փոփոխությունները կառուցվածքային առանձնահատկություններ են առաջացնում ընդմիջարկություններում, և նոր տրոհումներ են ձևավորվում: Բերված օրինակում ընդամենը մի երկրորդական նախադասության ընդմիջարկություն է տրոհումներով, և եթե արձակը վերածենք, կստացվի հետևյալը. *Դու*, որ նյութի տենդը կաշկանդող անդեմ ու կույր տարերքին ինձ պետ ես կարգել, *տուր* լինելու զգրություն: Այստեղ էլ երկրորդական նախադասությունը ընդմիջարկություն է, սակայն նախորդից ունի կառուցվածքային տարբերություններ: Համո Սահյանը գրում է. «Կրա է հասնում Հայրենական մեծ պատերազմը, և *ես*, տասը օրվա ամուսնացած, 1941 թվականի հունվարի 23-ին *մեկնում եմ* բանակ (ՍԵՐԿ, 34, սյուն. 5):

Օրինակներ գեղարվեստական արձակից՝

1. Այն *բուրոր*, ինչ մենք տեսնում ենք, զգում ենք կամ լսում, *ծնունդ են* տիեզերական մայր տաճարի (Իս., 203): 2. *Սա*, որ կաշե գոգնոցը կրծքին և մրոտ ձեռքերով ու դեմքով մատնում էր իր դարբին լինելը՝ *ասաց* (ԴԴՎ1, 133): 3. *Վահան Ամատունի*ն, որին ամենից շատ էին վերաբերում Դենշապուհի բանասարկություններն ու հարվածները, դառը ատելությունից՝ միայն *լռեց* ու *ունկնդրեց* գանգատների (Մ. տ., 143): 4. *Տանտիկիմը*, մինչև ականջակոթերը կարմրած, *աշխատում էր* մի կերպ եղածն *ուղղի* (ՀԹ, 268): 5. Եվ *նա*, ինքն իր մեջ զգալով, որ կայսրն իրավացի չէ, *վրդովվում* ու *զայրանում էր* Պապի դեմ (ՍԶ, 483): 6. Բակով անցնելիս *նրանք*, պահակապետից ծածուկ, *աչքով էին անում* ճանապարհին պատահող կամ պատշգամբներում երևացող նաժիշտներին (ՍԶ, 490): 7. Իրենց գրության մեջ *նրանք* բոլոր քաղաքացիների՝ թե՛ մեծի և թե՛ փոքրի կողմից (ինչպես գրում էին) «*աղերսում էին* աղերսագին ու արտասվանոք» (ՍԶ, 491): 8. *Սամվելը*, վաղ առավոտյան վերադառնալով Աշտիշատի վանքից, անմիջապես իր մորը *իմացում էր տվել* Սահակի այցելության մասին (Բ, 75): 9. Քո պապ *Արեւը*, խո՞ր գնաս, հանդից *գալիս էր* ու «դեռ էստեղ ե՞ս», քնից վեր էր կենում ու «դեռ էստեղ ե՞ս», շան

երես ունես, շան (ՀՀ. ՀՄ. ԱԱ, 234), 10. *Դույլը* լիքը, հա էլի, դաուրմա էր (ՀՄ, 13): 11. Ինքն այնտեղ հին ծանոթների միջոցով սրա հեռակա ինստիտուտի գործերը երկու-երեք տարին մեկ անգամ առաջ էր տանում (ՀՄ, 385):

Օրինակներում ընդմիջարկությունները կառուցվածքով բազմազան են՝ նախադասություններ, կապակցություններ, դարձվածքներ, անկապ և կապակցված կառույցներ: Վերջին օրինակում թեև դադարը որոշակի չէ, սակայն ընդմիջարկություն կարելի է համարել՝ ուղիղ և միջոցի անուղղակի խնդիրներ՝ իրենց լրացումներով (հին *ծանոթների միջոցով*. սրա հեռակա ինստիտուտի *գործերը*), ժամանակի պարագա է երկու-երեք տարին մեկ անգամ), երկու տեղի պարագաներ (այնտեղ, առաջ):

Օրինակներ գիտական գրականությունից՝

Հրաշյա Աճառյանը, խոսելով հետմետրոպայան շրջանի յուրահատուկ ձևերի ծագման մասին, երկու կարևոր բացատրություն է անում, որոնցում ենթական և ստորոգյալը ծավալուն ընդմիջարկություններ ունեն.

1. Այն *ձևերը*, որոնք բոլորովին նոր են հետմետրոպայան շրջանի հայերենում, կամ նոր փոխառություններ են իրանական լեզվից և կամ հայերեն գավառական ձևեր, որոնք մետրոպայան շրջանում դեռ դուրս եկած չէին իրենց անձուկ շրջանակից և հետմետրոպայան շրջանին միայն տարածվելով Հայաստանի ուրիշ մասերում, *դարձան* ուրիշ սեփականություն և մտան գրավոր լեզվի մեջ: 2. Այն *ձևերը*, որոնք ընդհանրապես նույն են մետրոպայան ձևերի հետ և նրանցից մասամբ միայն տարբերվում են, *արդյունք են* լեզվի հետագա զարգացման, նմանաբանության (analogie), ընդհանրացման (generalisation) և այլ լեզվաբանական օրենքների (Աճ., 108): 3. Եթե *-ական վերջածանցը* դրվելով գոյականի անվան վրա, նրան տալիս է սեռական հոլովի նշանակություն... նույն *ածանցյալը* դրվելով անորոշ դերբայի վրա, *արտահայտում է* գործողության եղելության հատկացումը, պատկանելությունը (ԱԱ, 159): 4. *Սրանք* (մանավանդ Չոբանյաններն ու Ջիլաիրյանները) գրեթե անփոփոխ *թողեցին* իշխանության պետական կարգը (ԼԽ, 65): 5. Այս ուսմունքի *դրույթները*, մի ուսմունք, որ Օրբելյանի արտահայտությամբ ապականել է «զմեծ մասն Հայոց», *արժանի են* մասնագիտական մանրակրկիտ ուսումնասիրման (ԼԽ, 453): 6. «Իսկ *հեթանոսք* (իմա՛ այդ նոր ուսմունքի գաղափարախոսները), *առարկեն* (երրորդութիւն անձանց այսպէս), զի որպէս Պետրոս մարդ է, և Պօղոս մարդ է, Յիսուս մարդ է, ապա են երեք մարդ և ոչ մի (ԼԽ, 464). այստեղ ենթական և ստորոգյալը գրաբար են, ընդմիջարկությունը՝ աշխարհաբար: 7. Բուն (կամ անկախ) *դերբայները*, որպես բայի անդեմ ձևեր, *հակադրվում են* դիմավոր ձևերին իմաստային ու քերականական էական հատկանիշներով (ՍԱ, 196): 8. Մյուս ցուցական *դերանունները* նույն, միևնույն, նույնպես, նույնպիսի, նույնքան, նույնչափ, մյուս, *ունեն* հարբերության որոշ յուրահատկություններ (ՍԱ, 180):

### Օրինակներ մամուլից

ժամանակակից հայ մամուլը առավել ազատ է իր խոսքով, որը հնարավորինս անկաշկանդ է, չափի մեջ ոչ այնքան զուսպ ու կանոնական, քերականական կապակցություններում հանդիպում են շեղումներ, անճշտություններ: Նշենք նաև, որ մեզ հետաքրքրող թեմային վերաբերող անսահան առատ նյութ կա: Մամուլի պատահական ընտրությամբ անզամ հնարավոր է ցույց տալ ընդմիջարկությունների գործածության ոչ միայն սահմաններն ու հաճախականությունը, այլև կառուցվածքային առանձնահատկությունները և տարբերակիչ կողմերը: Փաստեր են արձանագրվում կենտրոնական, մարզային, բուհական և այլ հրատարակություններից («Առավոտ», «Մանկավարժական համալսարան», «Սյունյաց երկիր», «Գրական Սյունի» և այլն):

Այսպես՝ 1. Այդ վստահությունը ես, մեղմ ասած, չունեմ (Առ., 1, սյուն. 2): 2. *Չայաստանը*, ինչպես և նախկինում, *շարունակելու է* իր ջանքերը դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ (ն. տ.): 3. Աստանայում ԵԱՀԿ գազաթափողվում *56 երկրներ*, ութժամյա դռնփակ բանավեճերից հետո, ինչպես ԴԴ ԱԳ նախկին նախարար Ալեքսանդր Արզումանյանն ասաց՝ ոչինչ չասող ամփոփիչ հուշագիր *ընդունեցին* (Առ., 2, սյուն. 2-3): 4. Արցախի հարցով քաղաքական բոլոր հնարավոր *որոշումները*, որոնք ընդունվեցին խորհրդային Չայաստանի ղեկավարների կողմից, ավերված, շրջափակված, հազար ու մի ճնշումների ենթարկված, անկայուն մի շրջանում, այսօր ՔՆՆԱՐԿՄԱՆ հարց *է դարձել* անկախ ու ապահով երկրի Ազգային ժողովում (Առ., 14, սյուն. 1) ենթակայի և ստորոգյալի անհամաձայնություն կա:

«Սյունյաց երկիր» տասնօրյա թերթից՝

1. 1993-ի սեպտեմբերին Կուբաթլիում ինքն (Սանոն՝ Սանասար Բեգլարյանը) ու տեղակալը՝ Գարիկ Մինասյանը, շրջափակման մեջ են ընկել, լուրջ ու անհավասար մարտ մղել, վիրավորվելով՝ *Սանոն*, թշնամու ձեռքը չընկնելու համար, *վերջ է տվել* իր կյանքին (ՍԵՐԿ, 31, սյուն. 5): 2. ԼՂՀ-ի Մարտակերտի հատվածի Չասանդայի համար մղված ահեղ մարտերում հայ *կամավորականները*, հերոսաբար դիմադրելով թշնամու մեծաքանակ ուժերին, ինքնամոռաց *մխրճվում են* թշնամական դիրքերի խորքը և հայտնվում ծուղակում (ՍԵՐԿ, 30, սյուն. 1): 3. Սակայն մարտական այս և նման *անհաջողությունները* (Արծվաշենի կորուստը և այլն) *չընկճեցին* հայ ժողովրդի պայքարի ոգին (ն. տ.): 4. *Չայկական կողմը*, գիտակցելով թշնամու այս մտադրությունները, միջոցներ *էր փնտրում* հակառակորդին ոչնչացնելու և գրաված դիրքերից հետ քշելու համար (ն. տ., սյուն. 3): Օսմանյան *զավթիչները* և Ադրբեջանի *կառավարությունը*՝ ուժեղացած և գոռոզացած, հենված Բաթումի դաշնագրի վրա, Ջանգեզուրի հայ բնակչությունից *պա-*

*հանջում էին* անվերապահորեն հպատակվել և զինաթափ լինել՝ հակառակ պարագային սպառնալով բնաջնջել (ՍԵՐԿ, 56, սյուն. 1): 6. Ադրբեջանական բանակի *մի թևը*՝ տաճիկ սպաների հրամանատարությամբ, Մուղանի դաշտավայրի կողմից շարժվելով դեպի Ջանգելանի շրջան, *պատրաստվում էր ներխուժել* Ղափան (ն. տ.): 7. Որոշման *նախագիծը*, որ շրջանառության մեջ էր դրվել ապրիլի 28-ից մոտ մեկ շաբաթ առաջ, Ածվանիկի առնչությամբ մի լուրջ վրիպակ էր պարունակում (ՍԵՐԿ, 10 հունիսի 2011, №11, 1, սյուն. 4): 8. 1992 թ. ամառային շրջանում մոտ 75 օր գումարտակի առանձին դասակներ (Տեղ, Շինահայր, Խնձորեսկ, Գորիս քաղաք, Կոռնիձոր, Գարթաշեն, Խնածախ, Խոզնավար) հերոսական կռիվներ են մղում թշնամու միջանցք (Սերկ, 28 մայիսի 2011 թ., № 10, էջ 28, սյուն. 4):

*«Գրական Սյունիք»-ից՝*

1. *Գրողն ու բանահավաքը* (Նապոլեոն Սկրտչյանի մասին է), որ ծնողների՝ Թամամ Պողոսի և Ավանես Սկրտչի Ավագյանների կամոք Շինուհայրից հասել է Կյորեսի Խուռուփի ձորը՝ Վարարակնի «նեղ» տեղամասում *վերակենդանացրել է «մեռնող վերջին կաղնին»* (ԳՐԱՍՅՈՒՆ, 2, սյուն. 2): 2. Խնձորեսկում և Գորիսում կայացած *միջոցառումները*՝ դպրոցի կազմակերպիչ Սեդա Խաչատրյանի և Գորիսի գրադարանի վարիչ Ջոյա Գալստյանի տքնաջան աշխատանքի *արդյունք էր* (ԳՐԱՍՅՈՒՆ, 1, սյուն. 1). անհամաձայնություն կա: Գրողի «Թեիրան» երկհազարանոց վեպը, որ թեմատիկ առումով նորություն էր մեր գրականության մեջ, ընդամենը երկու, երկուսուկես տարի առաջ մեծ հնչեղություն *ուներ* և նվաճել էր բազմահազար ընթերցողների սերն ու համակրանքը (ԳՐԱՍՅՈՒՆ, 2, սյուն. 2):

*«Մանկավարժական համալսարան»-ից՝*

1. Ցուցահանդեսի *հեղինակները*, որ յուրաքանչյուր նկարի լույս աշխարհ գալու հրճվանքն էին ապրել, այցելուներին *պարզևեցիմ* աղ հրճվանքը կիսելու և ուրիշներին փոխանցելու եզակի հնարավորություն (Մանկ., ապրիլ, 2011թ., № 6, էջ 8, սյուն. 5): 2. Դեկանի *թեկնածուն* (Յու. Դավթյանը), առանց հուզմունքը թաքցնելու, *ներկայացրեց* իր առաջիկա անելիքները (ն. տ. էջ 2, սյուն. 2): 3. *Մեխակները* այն մի քանի, որ այգու մեջ հետ պիտի հավելին սիրեկանին, արյուն *դարձան* ու ներկվեցին, սպիացան (ն. տ. էջ 1, սյուն. 2): 4. 1939 թ. *Գիտլերը*, իր գեներալներին կոչ անելով անխնայ սպանել ու կոտորել՝ առանց հաշվի առնելու զոհերի տարիքն ու սեռը, և, իհարկե, թքելով հասարակական կարծիքի վրա, նրանց *լախոշորեն ոգևորում էր* պատմական օրինակով. «Այսօր ո՞վ է հիշում հայերի ջարդը» (ն. տ., սյուն. 1, Խօսք եղուարդ Մեծելայտիսի):

Մեր ուշադրությունը գրավում են ստորոգյալի նախադաս գործածությունները:

Օրինակ՝ 1. Օլիմպիադան մեկնարկեց Տերյանի բանաստեղծությունների հիման վրա գրված երգերով, այնուհետև «տանտիրոջ իրավունքով» մասնակիցնե-

րին *ողջունեցին* և հաջողություն *մաղթեցին* Վանաձորի մանկավարժական ինստիտուտի գրականության և պատմության ամբիոնների *դասախոսները* (Մանկ., դեկտեմբեր, 2010թ., էջ 3, սյուն. 2-3): 2. Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդում արդեն *ավանդույթ է դարձել* ամեն տարի հայ մեծ բանաստեղծներին նվիրված ներֆակուլտետային ինտելեկտուալ խաղերի *կազմակերպումը* (ն. տ., սյուն. 2-4): 3. (ԴԱԱԴ) ֆինանսավորմամբ կազմակերպվեց գերմաներենի դասախոսների համար նախատեսված վերապատրաստման *սեմինար* (Մանկ., հոկտեմբեր, 2010 թ., էջ 5, սյուն. 3): 4. 1992 թ. հունիսի 10-ին հարավ-արևելյան սահմանագծի պաշտպանությանը մասնակցելու համար Գորիս է *ժամանում* հայոց կայացող կանոնավոր զորակոչիկների դեսանտային-գրոհային առաջին *ստորաբաժանումը* (ՍԵՐԿ, 28, սյուն. 3):

Ընդմիջարկություններին նախորդող՝ նախադաս ստորոգյալի պաշտոնով գործածական են *լրացավ, տեղի ունեցավ, քննարկվեց, մրցում էին, հանդիպեցին, պայքարում էին, ավարտվեց, սկսվեց, լույս տեսավ, տպագրվեց* և նման բայածներ: Նման դեպքերում ընդմիջարկությունը ծավալուն է ստացվում, եթե բնութագրվող ենթական հարուստ տվյալներ ունի, ասենք՝ հռչակավոր մտավորական է, գիտնական, քաղաքական գործիչ, ազգային հերոս և այլն:

Օրինակ՝ Ցուցահանդեսում *ներկայացված էին* մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի կինոյի և հեռուստատեսության ամբիոնի դասախոսների և ուսանողների շուրջ 150 *աշխատանքներ* (Մանկ., դեկտեմբեր, 2010 թ., 4, սյուն. 3, Ալբերտ Յավուրյանի հիշատակին) կամ՝ *Լրացավ* ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լևոն Պավելի Գրիգորյանի ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության *45 տարին* (ն. տ., էջ 3, ՅՈՒՆԵՍԿՈՒ, սյուն. 3) և այլն:

Մինչ այժմ խոսք եղավ ենթակա-ստորոգյալ կապակցության ընդմիջարկման մասին, կարելի է ընդունել, որ այդպիսի կապակցությունների ոլորտում բազմակի ենթակաները և ստորոգյալները, բաղադրյալ ստորոգյալները կարող են ունենալ ընդմիջարկումներ: Հատկապես բայական բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչները կարող են ունենալ ընդմիջարկություններ:

Օրինակ՝ 1. Շրջափակման ու Լաչինի փակ միջանցքի պայմաններում Գորիսը նաև կամրջի դեր էր կատարում Արցախի և Հայաստանի միջև, *տղաները կարողանում էին* ինչ-ինչ ճանապարհներով օգնություն, զենք, զինամթերք *հասցնել* Ղարաբաղ (ՍԵՐԿ, 31, սյուն. 5): 2 Ստեփանոս Օրբելյանի աշխատությունից, որն այդ ուսմունքի գաղափարախոսներից մեկի իմաստասիրական հայացքների եղծուն է, կարող ենք եզրակացնել, թե ուսմունքի *քարոզիչները* պնդել են և *աշխատել են* իմաստասիրական դատողություններով (հաճախ հենվելով Արիստոտելի և



այլ փիլիսոփաների դրույթների վրա) *սպացուցել*, որ Քրիստոսը «մարդ է և որդի մարդոյ, և ոչ Աստուած՝ որդի Աստուծոյ» (ԼԽ, 464): 3. Հաստատ վերականգնելու ենք, որովհետև *մենք* ոչ միայն շնչահեղձ չեղանք վերջին տարիներին մեր գլխին պայթած արհավիրքներից, այլև *կարողացանք* մեր պատմության մեջ երկար, շատ երկար ընդմիջումից հետո նաև մեծ հաղթանակներ *տանել* (Վազգեն Սարգսյանի կոչից՝ 1993 թ. Սյունյաց ժողովրդին ուղղված.- ՍԵՐԿ, 27, սյուն.3):

Ժամանակակից հայերենի բայը ուսումնասիրող հեղինակները մանրամասն խմբավորման են ենթարկում բայական բաղադրյալ ստորոգյալը՝ ցույց տալով նրա շարահյուսական կիրառությունը և կապը ձևաբանական արտահայտությունների հետ: Նշվում է, որ *կարողանում էին հասցնել, աշխատել են սպացուցել* տիպի կառույցներում *դիմավոր բայը եղանակավորիչ կերպավորիչի դերով է, իսկ անորոշ դերբայը արտահայտում է բուն գործողությունը և դիմավորի համար ուղիղ խնդիր չէ*:

Այս հարցում մեզ հետաքրքրում է մի երևույթ. ուսումնասիրողները վկայում են նաև օրինակներ, որտեղ ստորոգյալի բաղադրիչները ընդմիջարկված են, սակայն այդպիսի կիրառությունների վերաբերյալ որևէ ակնարկ, դիտարկում չեն կատարվում:

Օրինակ՝ 3. Օհանյանը բայական բաղադրյալ ստորոգյալ կազմող բայերը հինգ խմբի է բաժանում, և բերված օրինակներում հանդիպում են նաև ընդմիջարկություններ: Վկայենք դրանցից մի քանիսը<sup>1</sup>.

1. *Հրամայել էր* իսկույն իրենց սայլերն *ուղարկել* (ԴԴ): 2. *Ստիպված էր* որդուն էլ *ծախել* (ՍԽ, Մխիթար սպարապետ): 3. *Գերադասում են* մի քաշ լեշի միս, քան երեք հազար դուկատ *ստանալ* (Շեքսպիր, Վենետիկի վաճառականը): 4. *Միրում էր* միայն հրամաններ *լսել* (Ր., Սամվել): 5. *Անհրաժեշտ է* շատ կարճ ժամկետում *քննության առնել* հունվարի պլանը թերակատարելու պատճառները (ՍՀ, 17.2.1970). մեր կարծիքով այստեղ ենթակա ստորոգյալ են, քան ստորոգյալի բաղադրիչներ (կան էլի այսպիսի օրինակներ՝ *Անկարելի է պատմել* Մարիի վիշտն ու հուսահատությունը (ԻՍ., Սրտի դատողությունը) կամ՝ *Այլևս անհնար էր շարունակել* ճանապարհը (Շեքսպ., Վենետիկի վաճառականը) և այլն):

Բայական բաղադրյալ ստորոգյալների հիշյալ տեսակներից տարբերվում են հարադրական բայերով արտահայտվածները. վերջիններս պարզ ստորոգյալներ են լինում: Հարադիր բայերի (կամ բայական հարադրությունների) մանրամասն քննությունը կատարել է Ալեքսանդր Սարգսյանը<sup>2</sup>: Նա հարադիր բայերի մի

3 Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Գ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, մ. 3, Շարահյուսություն, Եր., 1976, էջ 159-162:

<sup>2</sup> Տե՛ս Ալեքսանդր Սարգսյան, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966 թ., 500էջ:

խումբը կոչում է *զուգադրական բայեր*<sup>1</sup> և հինգ կետերով բնութագրում դրանց ենթախմբերը: Վերջին մասում նշում է. «Ձուգադրական բայով արտահայտված ստորոգյալները... պարզ բայական ստորոգյալների ամբողջություն են կազմում: Այդ իմաստով նրանք կարող են կոչվել բաղադրված պարզ ստորոգյալներ»<sup>2</sup>: Հեղինակը հարյուրավոր օրինակներում այդպիսի ստորոգյալների բաղադրիների միջև չունի ոչ մի ընդմիջարկում, սակայն կատարում է մի կարևոր դիտարկում. «... երբ զուգադրական բայի բաղադրիչները իմաստապես մերձակից չեն իրար, ունեն սեռային տարբեր նշանակություններ և կամ մեկը մյուսից զատվում են նախադասության այլ անդամներով, ենթակային վերագրվող գործողությունների միջև կապը զգալիորեն թուլանում է», և ստորոգյալը «...հարում է մի տեսակ բազմակի ստորոգյալներին»: Ասվածը հիմնավորելու համար գիտնականը վկայում է երեք օրինակ, երկուսը՝ «նստում է ուտում», «զմամ ասեն» բայերով, մեկը, որը եզակի երևույթ է, ընդմիջարկությամբ. *Եկան մեր դռանը վեր ընկան* (Ղ. Աղ., Երկ., II, 67)<sup>3</sup>:

Մեր կարծիքով, թե՛ զուգադրական բայերը, որոնք անսահման շատ են, և թե՛ բազմակի ստորոգյալները կարող են ունենալ ընդմիջարկումներ:

Այլ. Մարգարյանը չի բացառում զուգադրական բայերի բաղադրիչների անջատ գործածության հնարավորությունը. նա գործածում է *տարանջատում* բառը. «...զուգադրական բայերի համար բոլորովին պարտադիր չէ, որ նրանց բաղադրիչները միշտ իրար կից կամ անմիջապես կողք-կողքի դրվեն: Նշանակում է՝ զուգադրական բայեր են կազմվում ոչ միայն իրար կից, այլև տարանջատ ձևով հանդես եկող բայերի հարադրությամբ, ինչպես, օրինակ՝ Հարուստները *զալիս* նրան *են կանչում* (Աղվալ., Շիր., 42), Կատուն երկյուղով շարժում է պոչը և գնում անկյունում *նստում* (Ստ. Ջոր., Երկ. ժող., I, 11), *Թռավ* ուսին *նստեց* մի բանվորի (Եղ. Չար., Ընտ. երկ., 100), Էն սև քարն էլ տաշեցին, *բերին վրդեն քաշեցին* (Հովհ. Թում., Երկ. ժող., II, 7), Նշանածին *առավ* գիրկը *պառկեցավ* (Ռ. Պատկ., Երկ., 40) և այլն»<sup>4</sup>: Օրինակներում բայերի բաղադրիչների միջև միայն մեկ բառով տարանջատում կա: Սա այլ բան չէ, քան մեր կողմից ուսումնասիրվող ընդմիջարկումը, որը տեղի է ունենում ոչ միայն քերականական կապակցություններում, այլև նախադասության մեկ անդամի կամ բառական մեկ միավորի կազմություններում, միջավայրում:

Օրինակներ զուգաբայերով և բազմակի ստորոգյալներով՝

1. *Տարան* անտակ էն ժեռ քարից,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 279-396:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 357. այստեղ հղում է Վարազ Առաքելյանին, հայերենի շարահյուսություն, հ. 1, Եր., 1958, էջ 114:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 357-358:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 296-297:

Որ կանգնած է մինչ էսօր,  
 Էն ահավոր քարի ծերից  
 Գլորեցին դեպի ձոր (ՀԹ, 257):

*Տանել գլորել* զուգաբայի բաղադրիչները ընդմիջարկված են որոշիչներ ունեցող *քարից* պարագայով, երկրորդական նախադասությամբ և լրացումներ ունեցող *ծերից* բացահայտչով, այսինքն՝ երկու բառակապակցությամբ և մի նախադասությամբ:

2. *Եկավ* էս Չատնիս հաչիցը *կապեց*,  
 Ինչքան որ գիտես՝ քո ասած *թակեց*,  
 Թե՛ պետք է կորցնեն քեզ էնքան հեռու,  
 Որ էլ չտեսնես արևը Լոռու (ՀԹ, 163-164):

*Եկավ կապեց* զուգաբայեր են, կարող է լինել նաև *եկավ կապեց թակեց*, մեծ սխալմունք չի լինի, եթե համարենք բազմակի ստորոգյալներ՝ նկատի ունենալով նրանց իմաստային պակաս սերտությունը՝ *եկավ, կապեց*:

Մանվել Ասատրյանը հարադրական բայերի շարքում «իմաստային այս կամ այն աղերսակցությունն ունեցող երկու բայերի միություն» է տեսնում՝ քոչել գնալ, պոկվել ընկնել<sup>1</sup>: Ս. Խանգաղյանը նման բայերի բաղադրիչները գործածում է ընդմիջարկությամբ.

Կաքավի երաններ *էին պոկվում* արծաթ թևերի ծափով, ցածր *թռչում* դեպի Խնկի տափի հնձած արտապատառները (ՍԽ, 57): Հեղինակը մեկ այլ դեպքում անջատ է գործածում *եղել պրծել* զուգադրական կառույցը. թվում է ինչ եղել, հազար հինգ հարյուր տարի առաջ է *եղել, պրծել* (ՍԽ, 62):

Եղած փաստերից հետևում է, որ զուգադրական բայերի բաղադրիչները կարող են ընդմիջարկվել, բայց ստույգ իրողություն է նաև այդպիսի բայերի բաղադրիչների իմաստի նվազման, կարելի է ասել՝ հեռացման երևույթը, որի հիման վրա այդպիսի զուգադրական բայերը գործառությամբ վերածվում են բազմակի ստորոգյալների, որոնք նույնպես կարող են ընդմիջարկվել ոչ միայն մեկ բառաձևով, այլ տարատեսակ բառերով ու կառույցներով: Մեր վկայած փաստերը ենթդրում են, որ զուգաբայերի և բազմակի ստորոգյալների բաղադրիչների ընդմիջարկման երևույթը տարածում գտած իրողություն է արդի հայերենի գրավոր և բանավոր տարբերակներում:

<sup>1</sup> Տես Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ., եր., 1977, էջ 106:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ժամանակակից հայերենում ընդմիջարկությունների ուսումնասիրությունը նոր երևույթ է, հետևապես նոր է նաև *ենթակա-ստորոգյալ* կապակցության ընդմիջարկման բնութագրությունը:
2. Քննվող կապակցությունն ուշադրության է արժանացել տրոհվող անդամների, միջանկյալ բառերի և կապակցությունների ուսումնասիրության առիթով, սակայն նրանց «տարանջատման» (Ալ. Մարգարյան) քննությունը սաղմնային վիճակում էր, որն անհարժեշտ էր տեսական, գիտագործնական լիարժեք հետազոտության, և, կարծում ենք, տարանջատման ըմբռնումը վերաճեց ընդմիջարկումների բնութագրման:
3. Ենթակա-ստորոգյալ կապակցության ընդմիջարկությունները կազմությանը՝ արտահայտությամբ և բաղադրիչների ներքին կապով բազմազան են. դրանք անկապ կամ կապակցած կառուցներ են, և տարբերվում են տրոհվող անդամներից ու միջարկություններից:
4. Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը, գրավոր տարբեր աղբյուրները (գեղարվեստական, գիտական գրականություն, մամուլ և այլն) իրենց ազդեցությունն ու թելադրանքն ունեն ընդմիջարկությունների վրա, որից էլ՝ նրանց առանձնահատկություններն ու յուրահատկությունները: Օրինակ՝ թեև քննության չի առնվել, բայց իրողություն է, որ նախադաս ստորոգյալը երկրորդական նախադասությամբ ընդմիջարկություն չի ունենա, մինչդեռ նախադաս ենթակայի համար սովորական երևույթ է:
5. Ենթակա-ստորոգյալ կապակցության, ստորոգյալի բաղադրիչների ընդմիջարկման հնարավորությունները և ընդմիջարկությունների բնութագրման տեսությունը պետք է տարածել ընդմիջարկվող մյուս կառույցների վրա, անշուշտ, արձանագրելով նրանցում եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

**ՀԱՍՏԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. ԱՃ.-Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Լնաս, Եր., 1951:
2. Աս- Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953:
3. ՍԱ- Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981:
4. Ալեքսանդր Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966:
5. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր, Գ. Եր., 1977:
6. Ր-Րաֆֆի, Սամվել, Եր., 1984:
7. ՀԹ- Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, Եր., 1978:
8. ՍԶ-Ստեփան Ջոռյան, Երկերի ժողովածու, հ. 8, Եր., 1983:
9. ՉԵ-Եղիշե Չարենց, Երկեր, Եր., 1983:
10. ՍԽ-Սերո Խանզադյան, Անձրևից հետո, Եր., 1969:
11. ՀՄ-Հրանտ Մաթևոսյան, Երկեր 2 հատորով, Եր., 1985:  
ՀՀ ՀՄ ԱԱ- Հայկական համաբարբառ, Հրանտ Մաթևոսյան, Աշնան արև,  
12. Առ., «Առավոտ» օրաթերթ, 4 դեկտ. 2010 շաբաթ:
13. ՍԵՐԿ- «Սյունյաց երկիր», Տասնօրյա թերթ, 28 մայիսի 2011, №10 (նվիրված է Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակին, 120 էջ):
14. ԳՐԱՍՅՈՒՆ-«Գրական Սյունիք», պաշտոնաթերթ, հունվար, 2011, թիվ 1(3):
15. Մանկ.- Մանկավարժական համալսարան, պաշտոնաթերթ (ՀՊՄՀ), 2010-2011 թթ. մի քանի համարներ:
16. ԴԴՎ1-Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, հ. 1, Եր., 1968:

**ВСТАВНЫЕ КОНСТРУКЦИИ ПРИ СИНТАКСИЧЕСКОЙ СВЯЗИ  
ПОДЛЕЖАЩЕЕ-СКАЗУЕМОЕ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

**БАБОЯН А.**

РЕЗЮМЕ

Вставные конструкции при синтаксической связи *подлежащее-сказуемое* в современном армянском языке осуществляются с помощью конструкторов, которые выражаются словами и разнообразными сочетаниями и представляют собой бессоюзные или союзные структуры. Вставные конструкции имеют специфическое проявление в художественной, научной речи и прессе. Вставные конструкции встречаются также в частях составного сказуемого и в глагольных коррелятах.

**DETACHMENT OF SUBJECT-PREDICATE COMBINATION IN MODERN ARMENIAN**

**BABOYAN A.**

SUMMARY

Modern Armenian subject-predicate combination may be detached by words, various combinations as well conjunctive and non-conjunctive structures. These detachments have a peculiar expression in literary, scientific and newspaper styles. The phenomena of detaching may occur within the compound predicate and phrasal verb constructions as well.